

# Քարտային ծառայություններ

## Սակագներ և այլ պայմաններ

*ֆիզիկական անձանց (այդ թվում անհատ ձեռնարկատերերի)*
*և կազմակերպությունների համար*

HSBC

# Ընտրեք Ձեր ապրելակերպին լավագույնս համապատասխանող քարտ



Կանխիկացրեք Ձեր հաշվին եղած միջոցները Հայաստանում և աշխարհի ավելի քան 160 երկրներում Ձեր ***միջազգային Visa Plus բանկոմատային քարտի*** միջոցով: Գումարի կանխիկացումն անվճար է, եթե իրականացվում է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի բանկոմատներից, որոնք այսօր թվով 50-ից ավելի են:



***ԱրՔա Կլասիկ քարտը*** *նախատեսված է Հայաստանում գործող առևտրի և սպասարկման կետերում անկանխիկ վճարումներ կատարելու, կանխիկ դրամական միջոցներ ստանալու և ԱրՔա-ի տարբերանշանը պարունակող ինտերնետային կայքերում վճարումներ կատարելու համար: Քարտը տրամադրվում է անվճար և առանց սպասարկման վճարի: Անկանխիկ գործարքների համար կիրառվում է մինչև 45 օր վճարման արտոնաշրջան:*



*Նախատեսված լինելով Ձեր կանխիկ, անկանխիկ և վարկային կարիքները հոգալու համար՝* ***ՄաստերՔարտ Ստանդարտ Flexi քարտը*** *կդառնա Ձեր առօրյայի մի մասը: Ստացեք քարտն առանց տրամադրման և ամսական սպասարկման վճարի՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի բանկոմատներից անվճար կանխիկացման հնարավորությամբ:*



*Ճամփորդում եք, կամ գուցե ամենօրյա անհրաժեշտության գնումներ եք կատարում՝* ***ՄաստերՔարտ Ստանդարտ քարտը*** *Ձեր վստահելի ընկերն է: Օգտվեք միլիոնավոր առևտրի և սպասարկման կետերից և բազմաթիվ զեղչերից ամբողջ աշխարհում, կատարեք գնումներ ինտերնետի միջոցով, ստացեք Ձեր կարիքներին համապատասխանող վարկային սահմանաչափ, իսկ անկանխիկ գործարքների համար՝ մինչև 45 օր վճարման արտոնաշրջան:*



***ՄաստերՔարտ Ոսկի քարտը*** *հանդիսանում է միջազգային վարկային քարտ, որը քարտապանին հնարավորություն է տալիս օգտվել մի շարք արտոնություններից՝ ավելի բարձր վարկային սահմանաչափ, հավելյալ քարտ առանց տրամադրման և սպասարկման վճարի, ինչպես նաև ավելի մեծ զեղչեր առևտրի և սպասարկման կետերում: Օգտագործեք Ձեր քարտը Հայաստանում և արտերկրում և օգտվեք մինչև 45 օր վճարման արտոնաշրջանից անկանխիկ գործարքներ իրականացնելիս:*



***ՄաստերՔարտ Պլատինում քարտն*** *ամենահեղինակավոր կրեդիտ քարտերից մեկն է աշխարհում, որի առավելություններն են՝ կանխիկ և անկանխիկ գործարքների ավելի մեծ սահմանաչափերը, անվճար Միջազգային Կոնսիերժ ծառայությունը, քարտի հրատապ վերաթողարկումը և կանխիկի հրատապ տրամադրումը արտերկրում: Ձեր ՄաստերՔարտ Պլատինում քարտի միջոցով Դուք ստանում եք գրավիչ զեղչեր ինչպես Հայաստանում այնպես էլ արտերկրում գնումներ և վճարումներ կատարելիս, ինչպես նաև մինչև 45 օր վճարման արտոնաշրջան:*



*Պրեմիում դասի* ***ՄաստերՔարտ World Black Edition քարտը*** *կընդգծի Ձեր յուրահատուկ կարգավիճակը և կհաղորդի նոր որակ քարտային վճարումներին: Քարտի առավելություններից են՝ վարկային սահմանաչափի ավելի ցածր տոկոսադրույքը, ճանապարհորդության անվճար ապահովագրությունը, օդանավակայանների Առաջնային մուտքի անվճար տրամադրվող անցաթուղթը, անվճար Միջազգային Կոնսիերժ ծառայությունը, քարտի հրատապ վերաթողարկումը և կանխիկի հրատապ տրամադրումը արտերկրում:*



# Միջազգային Visa Plus բանկոմատային քարտեր

## Սակագներ և այլ պայմաններ

| | |
|---|---|
| Քարտի թողարկում | Անվճար[1] |
| Քարտի սպասարկման ամսական վճար<br>• Ֆիզիկական անձինք<br>• Կազմակերպություններ/Անհատ ձեռնարկատերեր | <br>Անվճար<br>1 000 ՀՀ դրամ[2] |
| Հավելյալ քարտի թողարկում | 3 000 ՀՀ դրամ[1] |
| Հավելյալ քարտի սպասարկման վճար<br>• Ֆիզիկական անձինք (տարեկան)<br>• Կազմակերպություններ/Անհատ ձեռնարկատերեր (ամսական) | <br>6 000 ՀՀ դրամ<br>1 000 ՀՀ դրամ |
| Քարտի վերաթողարկում | 3 000 ՀՀ դրամ[3] |
| Փոխանցում Բանկում սպասարկվող հաշիվների միջև | Անվճար |
| Բանկում սպասարկվող հաշիվների միջև փոխանցման օրական սահմանաչափ<br>• Ֆիզիկական անձինք<br>• Կազմակերպություններ/Անհատ ձեռնարկատերեր | <br>1 000 000 ՀՀ դրամ<br>3 000 000 ՀՀ դրամ[4] |
| Կանխիկի դուրսբերում Բանկին պատկանող բանկոմատներից | Անվճար |
| Կանխիկի դուրսբերման օրական սահմանաչափ<br>• Ֆիզիկական անձինք<br>• Կազմակերպություններ/Անհատ ձեռնարկատերեր | <br>500 000 ՀՀ դրամ<br>3 000 000 ՀՀ դրամ[4] |
| Կանխիկի դուրսբերման վճար այլ բանկերի բանկոմատներից՝ յուրաքանչյուր գործարքի համար | 2 000 ՀՀ դրամ |

***Նշումներ***

- *Քարտի հաշվի արժույթը նույնն է ինչ Ձեր հաշվի արժույթը, որին կցված է քարտը:*
- *Մեկ բանկոմատային քարտին կարող եք կցել մինչև 3 հաշիվ:*
- *Բանկոմատային քարտը նախատեսված է բանկոմատներից կանխիկ գործարքներ իրականացնելու համար: Անկանխիկ գործարքների և վճարումների համար Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանն առաջարկում է կրեդիտ և վճարային քարտեր, որոնց պայմաններին կարող եք ծանոթանալ այս տեղեկատվական ամփոփագրի հաջորդ բաժնում:*
- *Բանկոմատների ցանկին ծանոթանալու համար այցելեք Բանկի ինտերնետային կայքը հետևյալ հղումով՝ www.hsbc.am/atms*

[1] *Թողարկվող առաջին երեք կորպորատիվ բանկոմատային քարտերը տրամադրվում են անվճար (կիրառելի է միայն կազմակերպությունների համար): Չորրորդ քարտից սկսած յուրաքանչյուր քարտի համար գանձվում է հավելյալ քարտի թողարկման վճար:*

[2] *Ամսական սպասարկման վճարը գանձվում է յուրաքանչյուր ամսվա սկզբում՝ նախորդ ամսվա համար:*

[3] *Ինտերնետային/Մոբայլ կամ Հեռախոսային Բանկային ծառայության միջոցով քարտի վերաթողարկումը կատարվում է անվճար (կիրառելի է միայն ֆիզիկական անձ հաճախորդների և անհատ ձեռնարկատերերի համար): Քարտը կուղարկվի Ձեր նախընտրած մասնաճյուղը դիմումի ստացման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:*

[4] *Քարտով կատարված գործարքների օրական սահմանաչափը հանդիսանում է ընդհանուր սահմանաչափ կազմակերպությանը թողարկված բոլոր քարտերի համար (կիրառելի է միայն կազմակերպությունների համար):*

# Կրեդիտ և վճարային քարտեր

| Սակագներ և այլ պայմաններ | ԱրՔա Կլասիկ Քարտ | ՄաստերՔարտ Ստանդարտ Flexi Քարտ [1] | ՄաստերՔարտ Ստանդարտ Քարտ |
|---|---|---|---|
| Քարտի թողարկում | Անվճար | Անվճար | Անվճար |
| Քարտային հաշվի սպասարկման ամսական վճար | Անվճար | Անվճար | 1 000 ՀՀ դրամ |
| Վարկային գծի տրամադրման վճար (Կորպորատիվ Կրեդիտ Քարտերի համար) | Վարկային սահմանաչափի 0.5 - 1% (նվազագույնը 35 000 ՀՀ դրամ) | - | Վարկային սահմանաչափի 0.5 - 1% (նվազագույնը 35 000 ՀՀ դրամ) |
| Հավելյալ քարտի թողարկում [2] | Անվճար | Անվճար | Անվճար |
| Հավելյալ քարտի սպասարկման ամսական վճար [2] | 500 ՀՀ դրամ | Անվճար | 500 ՀՀ դրամ |
| Տարեկան անվանական տոկոսադրույք | 22% | 18% | 21% |
| Կանխիկի տրամադրման վճար՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի բանկոմատներից և POS տերմինալներից կանխիկացնելիս | 250 ՀՀ դրամ (յուրաքանչյուր գործարքի համար) | Անվճար | Անվճար |
| Կանխիկի տրամադրման վճար՝ ԱրՔա համակարգում գործող այլ բանկոմատներից և POS տերմինալներից կանխիկացնելիս | 1.5% (նվազագույնը 500 ՀՀ դրամ) | 1.5% (նվազագույնը 500 ՀՀ դրամ) | 1.5% (նվազագույնը 500 ՀՀ դրամ) |
| Կանխիկի տրամադրման վճար՝ ԱրՔա համակարգին չպատկանող բանկոմատներից և POS տերմինալներից կանխիկացնելիս | - | 2.5% (նվազագույնը 1 000 ՀՀ դրամ բանկոմատներից, նվազագույնը 3 000 ՀՀ դրամ POS տերմինալներից կանխիկացնելու դեպքում) | 2.5% (նվազագույնը 1 000 ՀՀ դրամ բանկոմատներից, նվազագույնը 3 000 ՀՀ դրամ POS տերմինալներից կանխիկացնելու դեպքում) |
| Քարտից քարտ գումարների փոխանցում (ԱրՔա կայքի միջոցով՝ www.arca.am) | Փոխանցված գումարի 0.5% | Փոխանցված գումարի 0.5% | Փոխանցված գումարի 0.5% |
| Քարտի վերաթողարկում | 2 500 ՀՀ դրամ | 5 000 ՀՀ դրամ | 5 000 ՀՀ դրամ |
| Քարտի ծածկագրի (PIN) ապաբլոկավորում | 1 000 ՀՀ դրամ | 1 000 ՀՀ դրամ | 1 000 ՀՀ դրամ |
| Գործարքի պատճենի տրամադրում | 5 000 ՀՀ դրամ [3] | 8 000 ՀՀ դրամ [3] | 8 000 ՀՀ դրամ [3] |
| Իրական գործարքի ոչ ճիշտ վիճարկում | 10 000 ՀՀ դրամ | 15 000 ՀՀ դրամ | 15 000 ՀՀ դրամ |
| Քարտի վարկային սահմանաչափի մշտական կամ ժամանակավոր վերանայում | Անվճար | Անվճար | Անվճար |
| SMS ծառայություն | Անվճար | Անվճար | Անվճար |
| Ամսական քաղվածքի առաքում (ՀՀ տարածքում) | Անվճար | Անվճար | Անվճար |
| Քարտային հաշվի յուրաքանչյուր քաղվածքի պատճենի տրամադրում (եթե այն ունի 6 ամսվա վաղեմություն) | 3 000 ՀՀ դրամ [3] | 3 000 ՀՀ դրամ [3] | 3 000 ՀՀ դրամ [3] |
| **Վճարի ուշացման տույժ** | **Ժամկետանց գումարի 10%** | **Ժամկետանց գումարի 10%** | **Ժամկետանց գումարի 10%** |
| **Վարկային սահմանաչափի գերազանցման տույժ** | **Սահմանաչափը գերազանցող գումարի 10%** | **Սահմանաչափը գերազանցող գումարի 10%** | **Սահմանաչափը գերազանցող գումարի 10%** |
| Կանխիկի դուրսբերման սահմանաչափ (օրական) | 300 000 ՀՀ դրամ | 400 000 ՀՀ դրամ | 400 000 ՀՀ դրամ |
| Կանխիկացման գործարքների քանակ (օրական) | Առավելագույնը 2 | Առավելագույնը 3 | Առավելագույնը 2 |
| Գործարքների քանակ, ներառյալ կանխիկ և անկանխիկ գործարքներ և հաշվեկշռի հարցումներ (օրական) | 20 | 20 | 20 |
| Յուրաքանչյուր անկանխիկ գործարքի առավելագույն սահմանաչափ | 1 000 000 ՀՀ դրամ | 5 000 000 ՀՀ դրամ | 5 000 000 ՀՀ դրամ |
| Քարտի կորստի դեպքում՝ հաճախորդի հնարավոր առավելագույն վնասի չափը, քարտի կորստի մասին տեղեկացնելուց հետո [4] | Մինչև 25 000 ՀՀ դրամ | Մինչև 25 000 ՀՀ դրամ | Մինչև 25 000 ՀՀ դրամ |
| Պարտադիր նվազագույն վճար | Վերջնական բացասական մնացորդի 10% (նվազագույնը 5 000 ՀՀ դրամ) | Վերջնական բացասական մնացորդի 10% (նվազագույնը 10 000 ՀՀ դրամ) | Վերջնական բացասական մնացորդի 10% (նվազագույնը 10 000 ՀՀ դրամ) |
| Գործարքի մշակման վճար *(կիրառվում է ՄաստերՔարտի կողմից)* | - | ԱՄՆ 0,25 դոլարին համարժեք ՀՀ դրամ (յուրաքանչյուր գործարքի համար) | ԱՄՆ 0,25 դոլարին համարժեք ՀՀ դրամ (յուրաքանչյուր գործարքի համար) |
| Վարկային սահմանաչափ և արժույթ [5] | 100 000 ՀՀ դրամից մինչև 500 000 ՀՀ դրամ | 100 000 ՀՀ դրամից մինչև 1 000 000 ՀՀ դրամ | 100 000 ՀՀ դրամից մինչև 1 000 000 ՀՀ դրամ |
| Արտոնաշրջան (անտոկոս վարկավորում) [6] | Մինչև 45 օր (15 օր քաղվածքի օրվանից) | Չի կիրառվում | Մինչև 45 օր (15 օր քաղվածքի օրվանից) |

*[1] ՄաստերՔարտ Ստանդարտ Flexi քարտը տրամադրվում է միայն ֆիզիկական անձանց:*
*[2] Հավելյալ քարտի սակագները կարգավորվում են հիմնական քարտի սակագներով:*
*[3] Ներառյալ ԱԱՀ:*
*[4] Տես Քարտային Ծառայությունների Տրամադրման Պայմանների 7-րդ կետը:*
*[5] Կիրառելի է միայն ֆիզիկական անձանց համար:*

*[6] Արտոնաշրջանը կիրառվում է անկանխիկ գործարքների դեպքում, և եթե քաղվածքի վերջնական մնացորդի ամբողջ վճարումը ստացվել է Բանկի կողմից մինչև/կամ Վճարման օրը: Արտոնաշրջանի տևողությունը կարող է տարբեր լինել՝ կախված թե ամսվա որ օրն է տվյալ գործարքը գրանցվել քարտային հաշվի վրա:*

| Սակագներ և այլ պայմաններ | ՄաստերՔարտ Ոսկի Քարտ | ՄաստերՔարտ Պլատինում Քարտ | ՄաստերՔարտ World Black Edition Քարտ |
|---|---|---|---|
| Քարտի թողարկում | Անվճար | Անվճար | Անվճար |
| Քարտային հաշվի սպասարկման ամսական վճար | 1 500 ՀՀ դրամ | 3 000 ՀՀ դրամ | 10 000 ՀՀ դրամ |
| Վարկային գծի տրամադրման վճար (Կորպորատիվ Կրեդիտ Քարտերի համար) | Վարկային սահմանաչափի 0.5 - 1% (նվազագույնը 35 000 ՀՀ դրամ) | Վարկային սահմանաչափի 0.5 - 1% (նվազագույնը 35 000 ՀՀ դրամ) | Վարկային սահմանաչափի 0.5 - 1% (նվազագույնը 35 000 ՀՀ դրամ) |
| Հավելյալ քարտի թողարկման և սպասարկման ամսական վճար [1] | Անվճար | Անվճար | Անվճար |
| Տարեկան անվանական տոկոսադրույք | 21% | 21% | 20% |
| Կանխիկի տրամադրման վճար՝ HSBC Բանկ Հայաստանի բանկոմատներից և POS տերմինալներից կանխիկացնելիս | Անվճար | Անվճար | Անվճար |
| Կանխիկի տրամադրման վճար՝ ԱրՔա համակարգում գործող այլ բանկոմատներից և POS տերմինալներից կանխիկացնելիս | 1.5% (նվազագույնը 500 ՀՀ դրամ) | 1.5% (նվազագույնը 500 ՀՀ դրամ) | 1.5% (նվազագույնը 500 ՀՀ դրամ) |
| Կանխիկի տրամադրման վճար՝ ԱրՔա համակարգին չպատկանող բանկոմատներից և POS տերմինալներից կանխիկացնելիս | 2.5% (նվազագույնը 1 000 ՀՀ դրամ բանկոմատներից, նվազագույնը 3 000 ՀՀ դրամ POS տերմինալներից կանխիկացնելու դեպքում) | 2.5% (նվազագույնը 1 000 ՀՀ դրամ բանկոմատներից, նվազագույնը 3 000 ՀՀ դրամ POS տերմինալներից կանխիկացնելու դեպքում) | 2.5% (նվազագույնը 1 000 ՀՀ դրամ բանկոմատներից, նվազագույնը 3 000 ՀՀ դրամ POS տերմինալներից կանխիկացնելու դեպքում) |
| Կանխիկի հրատապ տրամադրում (մինչև 1 000 ԱՄՆ դոլար) | - | 50 000 ՀՀ դրամ [2] | 50 000 ՀՀ դրամ [2] |
| Քարտից քարտ գումարների փոխանցում (ԱրՔա կայքի միջոցով՝ www.arca.am) | Փոխանցված գումարի 0.5% | Փոխանցված գումարի 0.5% | Փոխանցված գումարի 0.5% |
| Քարտի վերաթողարկում | 5 000 ՀՀ դրամ | 5 000 ՀՀ դրամ | 5 000 ՀՀ դրամ |
| Քարտի հրատապ վերաթողարկում | - | 75 000 ՀՀ դրամ [2] | 75 000 ՀՀ դրամ [2] |
| Քարտի ծածկագրի (PIN) ապաբլոկավորում | Անվճար | Անվճար | Անվճար |
| Գործարքի պատճենի տրամադրում | 8 000 ՀՀ դրամ [3] | 8 000 ՀՀ դրամ [3] | 8 000 ՀՀ դրամ [3] |
| Իրական գործարքի ոչ ճիշտ վիճարկում | 15 000 ՀՀ դրամ | 15 000 ՀՀ դրամ | 15 000 ՀՀ դրամ |
| Քարտի վարկային սահմանաչափի մշտական կամ ժամանակավոր վերանայում | Անվճար | Անվճար | Անվճար |
| SMS ծառայություն | Անվճար | Անվճար | Անվճար |
| Ամսական քաղվածքի առաքում (ՀՀ տարածքում) | Անվճար | Անվճար | Անվճար |
| Քարտային հաշվի յուրաքանչյուր քաղվածքի պատճենի տրամադրում (եթե այն ունի 6 ամսվա վաղեմություն) | 3 000 ՀՀ դրամ [3] | 3 000 ՀՀ դրամ [3] | 3 000 ՀՀ դրամ [3] |
| **Վճարի ուշացման տուգանք** | **Ժամկետանց գումարի 10%** | **Ժամկետանց գումարի 10%** | **Ժամկետանց գումարի 10%** |
| **Վարկային սահմանաչափի գերազանցման տուգանք** | **Սահմանաչափը գերազանցող գումարի 10%** | **Սահմանաչափը գերազանցող գումարի 10%** | **Սահմանաչափը գերազանցող գումարի 10%** |
| Կանխիկի դուրսբերման սահմանաչափ (օրական) | Վարկային սահմանաչափի 30%-ը կամ 500 000 ՀՀ դրամ, որն ավելի մեծ է | Վարկային սահմանաչափի 40%-ը կամ 500 000 ՀՀ դրամ, որն ավելի մեծ է | Վարկային սահմանաչափի 40%-ը կամ 500 000 ՀՀ դրամ, որն ավելի մեծ է |
| Կանխիկացման գործարքների քանակ (օրական) | Առավելագույնը 3 | Առավելագույնը 3 | Առավելագույնը 3 |
| Գործարքների քանակ, ներառյալ կանխիկ և անկանխիկ գործարքներ և հաշվեկշռի հարցումներ (օրական) | 20 | 20 | 20 |
| Յուրաքանչյուր անկանխիկ գործարքի առավելագույն սահմանաչափ | 5 000 000 ՀՀ դրամ | 10 000 000 ՀՀ դրամ | 10 000 000 ՀՀ դրամ |
| Քարտի կորստի դեպքում՝ հաճախորդի հնարավոր առավելագույն վնասի չափը, քարտի կորստի մասին տեղեկացնելուց հետո [4] | Մինչև 25 000 ՀՀ դրամ | Մինչև 25 000 ՀՀ դրամ | Մինչև 25 000 ՀՀ դրամ |
| Պարտադիր նվազագույն վճար | Վերջնական բացասական մնացորդի 10% (նվազագույնը 10 000 ՀՀ դրամ) | Վերջնական բացասական մնացորդի 10% (նվազագույնը 10 000 ՀՀ դրամ) | Վերջնական բացասական մնացորդի 10%, (նվազագույնը 10 000 ՀՀ դրամ) |
| Գործարքի մերժման վճար *(կիրառվում է ՄաստերՔարտի կողմից)* | ԱՄՆ 0,25 դոլարին համարժեք ՀՀ դրամ (յուրաքանչյուր գործարքի համար) | ԱՄՆ 0,25 դոլարին համարժեք ՀՀ դրամ (յուրաքանչյուր գործարքի համար) | ԱՄՆ 0,25 դոլարին համարժեք ՀՀ դրամ (յուրաքանչյուր գործարքի համար) |
| Վարկային սահմանաչափ և արժույթ [5] | 500 000 ՀՀ դրամից մինչև 3 000 000 ՀՀ դրամ | 1 000 000 ՀՀ դրամից մինչև 5 000 000 ՀՀ դրամ | 1 000 000 ՀՀ դրամից մինչև 5 000 000 ՀՀ դրամ |
| Արտոնաշրջան (անտոկոս վարկավորում) [6] | Մինչև 45 օր (15 օր քաղվածքի օրվանից) | Մինչև 45 օր (15 օր քաղվածքի օրվանից) | Մինչև 45 օր (15 օր քաղվածքի օրվանից) |
| Առաջնային մուտքի քարտի տրամադրում | - | - | Անվճար |
| Առաջնային մուտքի քարտի օգտագործում օդանավակայանների սպասասրահներում[7] | - | - | 20 000 ՀՀ դրամ յուրաքանչյուր այցի համար |
| Ճանապարհորդության ապահովագրություն (տարեկան) | - | - | Անվճար |
| Միջազգային Կոնսիերժ ծառայություն [8] | - | Անվճար | Անվճար |

*[1] Հավելյալ քարտի սակագները կարգավորվում են հիմնական քարտի սակագներով:*
*[2] Հայաստանից դուրս կանխիկի հրատապ տրամադրման (2-24 ժամվա ընթացքում), ինչպես նաև քարտի հրատապ վերաթողարկման համար՝ (48 ժամվա ընթացքում), խնդրում ենք զանգահարել (+1 636 722 711 1) Մաստերքարտի աջակցության կենտրոնի հեռախոսահամարով:*

*[3] Ներառյալ ԱԱՀ:*
*[4] Տես Քարտային Ծառայությունների Տրամադրման Պայմանների 7-րդ կետը:*
*[5] Կիրառելի է միայն ֆիզիկական անձանց համար:*

*[6] Արտոնաշրջանը կիրառվում է անկանխիկ գործարքների դեպքում, և եթե քաղվածքի վերջնական մնացորդի ամբողջ վճարումը ստացվել է Բանկի կողմից մինչև/կամ Վճարման օրը: Արտոնաշրջանի տևողությունը կարող է տարբեր լինել՝կախված թե ամսվա որ օրն է տվյալ գործարքը գրանցվել քարտային հաշվի վրա:*

*[7] Քարտի հետ տրվում է տարեկան 1 անվճար մուտքի հնարավորություն: Օդանավակայանների և սպասասրահների ցանկին և մանրամասներին ծանոթացեք «Priority Pass Airport Lounge» ուղեցույցում կամ **www.prioritypass.com** ինտերնետային կայքում:*
*[8] Ծառայության վերաբերյալ մանրամասների համար այցելեք **www.hsbc.am** կայքի «Միջազգային կոնսիերժ ծառայություն» բաժինը:*

# Բանկոմատային և կրեդիտ քարտերի օգտագործման անվտանգության կանոններ

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից տրամադրված կրեդիտ և բանկոմատային քարտերը Ձեզ հնարավորություն են ընձեռում ամենուր արագ, հարմարավետ և հուսալի կերպով օրվա ցանկացած ժամի վճարել Ձեր գնումների համար կամ գումար կանխիկացնել: Ձեր բանկոմատային և կրեդիտ քարտերը զեղծարարությունից կամ չլիազորված օգտագործումից պաշտպանված պահելու համար, լինի Հայաստանում թե արտերկրում, նվազագույնը պետք է պահպանել հետևյալ անվտանգության կանոնները:

1. Քարտը ստանալուն պես անպայման գնդիկավոր գրիչով ստորագրեք քարտի դարձերեսին (կիրառելի է միայն կրեդիտ քարտերի համար):
2. Թույլ մի տվեք ոչ ոքի օգտագործել Ձեր քարտը:
3. Մի՛ հաղորդեք Ձեր քարտին վերաբերող որևէ տեղեկություն՝ քարտի համարը կամ վավերականության ժամկետը, երրորդ անձանց այդ թվում էլեկտրոնային փոստով: Հետևեք, որ բոլոր գործարքները կատարվեն Ձեր անմիջական ներկայությամբ:
4. Երբեք կրեդիտ քարտը կամ բանկոմատային քարտը ուրիշին մի՛ տրամադրեք, թույլ մի տվեք, որ մեկ ուրիշը օգտվի Ձեր քարտից: Եթե կրեդիտ քարտը կամ բանկոմատային քարտը՝ Ձեր համաձայնությամբ կամ առանց Ձեր գիտության վերցրել է ընտանիքի մեկ այլ անդամը (ամուսին, երեխա, ծնող), նրանց կատարած գնումների կամ այլ գործարքների համար պատասխանատվություն կրում եք Դուք:
5. Հասարակական վայրերում քարտը Ձեր տեսադաշտից դուրս մի՛ թողեք:
6. Անմիջապես տեղեկացրեք Բանկին Ձեր քարտը գողանալու կամ կորցնելու, ինչպես նաև Ձեր քարտով կատարված գործարքի կապակցությամբ որևէ կասկած ունենալու դեպքերում:
7. Ոչ ոքի, նույնիսկ Բանկի աշխատակիցներին, մի՛ հայտնեք Ձեր քարտի Անձնական ծածկագիրը (ԱԾ):
8. Հիշեք, որ Բանկը երբևէ չի խնդրի Ձեզ տրամադրել Ձեր քարտի ԱԾ-ն և/կամ CVV/CVC տվյալները (քարտի դարձերեսին գրված եռանիշ անվտանգության կոդը):
9. Ձեր ԱԾ-ն փոխելու դեպքում խուսափեք կրկնվող նիշերի (օրինակ՝ 2222, 1111 և այլն), հաջորդական նիշերի (օրինակ՝ 1234, 6543) կամ հեշտ կռահելի անձնական տվյալներ (օրինակ՝ ծննդյան տարեթիվ, հեռախոսահամար) օգտագործելուց:
10. Մի՛ պահեք Ձեր քարտը և ԱԾ-ն միասին, նույնիսկ եթե ԱԾ-ն քողարկված է հեռախոսահամարի ձևով, քանի որ այն հեշտությամբ կարելի է վերծանել:
11. Ձեր անձնական քարտի մանրամասները, մասնավորապես՝ ԱԾ-ն և/կամ CVV/CVC տվյալները (քարտի դարձերեսին գրված եռանիշ անվտանգության կոդը), մի՛ պահեք Ձեր համակարգչում, այլ էլեկտրոնային կապի սարքավորումներում կամ էլեկտրոնային համակարգերի տվյալների բազաներում:
12. Եթե բանկոմատը կամ վճարային սարքը, որից Դուք օգտվում եք, թվերի վահանակի պաշտպանիչ ծածկ չունի, Ձեր ԱԾ-ն մուտքագրելիս միշտ ձեռքով ծածկեք թվերի վահանակը՝ գաղտնիության ապահովման համար:



13. Եթե Ձեր քարտը բանկոմատ մուտք անելուց հետո կարծում եք, որ բանկոմատը խափանվել է կամ բանկոմատի վրա առկա է այլ սարք կամ գործիք, այդ մասին անհապաղ տեղեկացրեք Բանկին՝ մնալով բանկոմատի մոտ, եթե դա ապահով է:
14. Բանկոմատից օգտվելու ընթացքում զգուշացե՛ք որևէ մեկի կողմից առաջարկվող օգնությունից, հատկապես, եթե օգնությունը Դուք չեք խնդրել, և այդ անձը Բանկի աշխատակիցը չէ:
15. Եթե կասկածում եք, որ Ձեր քարտի ԱԾ-ն կամ որևէ այլ գաղտնի տեղեկատվություն (օրինակ՝ քարտի տվյալները) հայտնի է մեկ այլ անձի, անմիջապես տեղեկացրեք Բանկին:
16. Անմիջապես կապ հաստատեք Բանկի հետ, եթե որևէ մեկը, ներկայանալով Բանկի անունից պահանջում է Ձեզանից տրամադրել Ձեր քարտը, ԱԾ-ն կամ որևէ այլ անձնական տվյալը:
17. Ինտերնետով որևէ գործարք կատարելուց առաջ մանրամասն ուսումնասիրեք գործարքի կատարման և վճարման պայմանները, մասնավորապես՝ մանր տառերով գրվածները:
18. Ինտերնետով որևէ գնում, հյուրանոցի կամ ավտոմեքենայի պատվերի որևէ նախնական գրանցում կատարելուց առաջ ինտերնետում փնտրե՛ք Ձեր նախընտրած ապրանքին կամ ծառայությանը վերաբերող կարծիքներ կամ քննարկումներ, վստահ լինելու համար, որ վաճառող կողմը իսկապես տրամադրում է ինտերնետային կայքում նկարագրված ծառայությունները:
19. Ուշադի՛ր եղեք, որ գործարքներից հետո Ձեզ տրամադրվեն կտրոններ/անդորրագրեր:
20. Միշտ ստուգե՛ք գործարքների կտրոնները/անդորրագրերը և դրանց վրա արտացոլված գումարի չափը՝ դրանք ստորագրելուց առաջ:
21. Ձեզ մոտ պահեք գործարքների անդորրագրերը, ինչպես նաև բանկոմատի կողմից տրամադրված կտրոնները ամսական քաղվածքների հետ համեմատելու համար:
22. Միշտ ստուգե՛ք քարտի/երի քաղվածքը/ները, մասնավորապես ճանապարհորդությունից հետո: Համեմատեք կատարված գնումների արժեքը գործարքների կտրոնների հետ, ինչպես նաև բանկոմատային քարտով կատարված գործարքները քաղվածքում/ներում նշված գործարքների գումարների հետ և Ձեր կողմից չվավերացված կամ չլիազորված գործարքներ հայտնաբերելու դեպքում անհապաղ տեղեկացրեք Բանկին:
23. Ոչնչացրե՛ք ֆինանսական փաստաթղթերը, ներառյալ կրեդիտ քարտի գործարքների, բանկոմատային գործարքների կտրոնները, կրեդիտ քարտի և Ձեր բանկային հաշիվների քաղվածքները, եթե դրանք այլևս Ձեզ անհրաժեշտ չեն:
24. Ճանապարհորդելուց առաջ համոզվեք, որ Բանկին  տրամադրել եք Ձեզ հետ հաղորդակցվելու թարմացված տվյալները, մասնավորապես՝ բջջային հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն:
25. Ուշադիր եղեք քարտի վավերականության ժամկետին: Եթե Դուք դեռ չեք ստացել Ձեր վերաթողարկված քարտը, կապ հաստատեք Բանկի հետ՝ նոր քարտի տրամադրման նպատակով:

## Տարեկան անվանական և փաստացի տոկոսադրույքներ

**Տարեկան անվանական տոկոսադրույքը դա վարկի գումարի մնացորդի նկատմամբ կիրառվող տարեկան տոկոսադրույքն է:**

**Տարեկան փաստացի տոկոսադրույքը (Annual Percentage Rate կամ APR)՝ դա վարկավորման ընդհանուր ծախսն է արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով: Այն ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը վարկառուի համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:**

**Տարեկան փաստացի տոկոսադրույքը** հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^{N} \frac{CF_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}} = \sum_{n=1}^{N} \left( CF_n \times (1+i)^{-\frac{D_n}{365}} \right)$$

**որտեղ՝**

**i** տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը սպառողի վարկավորման ընդհանուր ծախսն է՝ արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով, որն իր մեջ ներառում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում

**A** սպառողին տրամադրվող վարկի սկզբնական գումարը

**n** սպառողի կողմից վարկի մարմանն ուղղված վճարի (վարկի հիմնական գումար, տոկոսագումար և/կամ այլ վճար՝ ներառյալ վարկի ստացման պահին կատարվող վճար) հերթական համարը

**N** վճարումների քանակը

**CFn** սպառողի կողմից վարկի ստացման պահին և/ կամ վարկի գործողության ընթացքում կատարված հերթական՝ n-րդ վճարի գումարն է (հիմնական գումար, տոկոսագումարներ և/կամ այլ վճարումների գումարներ)

**Dn** այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել վարկի ստացման օրից մինչև վարկի գումարի հերթական՝ n-րդ մարման օրը ներառյալ

## Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ

**Կրեդիտ քարտի պայմաններ**

- Քարտի տեսակ՝ ՄաստերՔարտ Ստանդարտ
- Տրամադրվող վարկային սահմանաչափ՝ 1 000 000 ՀՀ դրամ
- Անվանական տարեկան տոկոսադրույք՝ 21%
- Հաշվարկման ժամկետ՝ 12 ամիս, կամ 365 օր
- Մարումներ՝ առնվազն ամիսը մեկ անգամ վարկային սահմանաչափի օգտագործված մասի՝ (ներառյալ հաշվեգրված տոկոսները[1]) նվազագույնը 10%-ի չափով՝ նվազագույնը՝ 10 000 ՀՀ դրամ:
- Քարտային հաշվի սպասարկման ամսական վճար՝ 1 000 ՀՀ դրամ
- Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի բանկոմատներից գումարի կանխիկացման վճար՝ չի կիրառվում
- Քարտի վարկային սահմանաչափի տրամադրման օր՝ 01 օգոստոս, 2016թ.
- Քաղվածքի/վճարման օր՝ 01 սեպտեմբեր, 2016թ.

**Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 24.60%**

[1] *Տոկոսները հաշվեգրվում են վարկային սահմանաչափի օգտագործված մասն առաջին վճարման հաշվետու ժամանակահատվածում ամբողջությամբ չմարելու դեպքում, երկրորդ ամսվանից սկսած մինչև կատարված ծախսերի լրիվ մարումը՝ տոկոսը կիրառելով դրա սկզբնական գումարի վրա՝ այդ ծախսերի գոյացման պահից:*



### *Կարևոր նշումներ*

- *Բանկոմատային քարտին կցված հաշիվների (խնայողական, ընթացիկ) և կրեդիտ քարտի հաշվի դրական մնացորդի դիմաց տոկոսներ չեն հաշվարկվում:*
- *Կրեդիտ քարտի քարտապանի նվազագույն տարիքը պետք է լինի 18 տարեկան, առավելագույնը՝ 65 տարեկան:*
- *Վարկային քարտի տրամադրման մասին որոշումը կայացվում է, և պլաստիկ քարտը հաճախորդի նախընտրած հասցեով առաքվում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում:*
- *Քարտն օգտագործելուց առաջ հաճախորդը պետք է ակտիվացնի այն: Ակտիվացումը կարող է կատարվել մասնաճյուղերում կամ զանգահարելով **+374 60 655 000** հեռախոսահամարով: Ակտիվացումը Հաճախորդի հանձնարարականի հիման վրա կատարվում է հանձնարարականն ընդունելու պահին; Բանկի մասնաճյուղում Քարտը Հաճախորդի կողմից ստանալու և Հաճախորդի կողմից Քարտի ակտիվացման հանձնարարական չներկայացնելու դեպքում քարտի ակտիվացումը կկատարվի առավելագույնը քարտը ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Քարտը փոստային ծառայության միջոցով ստանալու դեպքում քարտի ակտիվացումը կատարվում է միայն Հաճախորդի հանձնարարականի հիման վրա: Կիրառելի է միայն կրեդիտ քարտերի համար:*
- *ՄաստերՔարտ և ԱրՔա Կլասիկ քարտերը թողարկվում են երեք տարի ժամկետով: Ժամկետի ավարտին քարտերը ենթակա են վերաթողարկման Բանկի հայեցողությամբ:*
- *Բանկոմատային քարտերը տրամադրվում անժամկետ:*
- *Կրեդիտ քարտի վարկային սահմանաչափը տրամադրվում է անժամկետ, սակայն կարող է վերանայվել Բանկի հայեցողությամբ:*
- *Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի կողմից տրամադրվող ծառայությունների բոլոր պայմանները և սակագները, ներառյալ անվանական տոկոսադրույքը, կարող են փոփոխվել, ինչի մասին հաճախորդները կտեղեկացվեն նախապես: Գործող պայմաններին և սակագներին, ինչպես նաև դրանց փոփոխությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությանը ծանոթացեք «Քարտային Ծառայությունների Տրամադրման Պայմաններ ֆիզիկական անձանց (այդ թվում անհատ ձեռնարկատերերի) և կազմակերպությունների համար» տեղեկատվական ամփոփագրում, մեր ինտերնետային կայքում՝ **www.hsbc.am** կամ զանգահարելով **+374 60 655 000** հեռախոսահամարով:*

**Թողարկված է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի կողմից**

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն հանդիսանում է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի անդամ, որը աշխարհի ֆինանսական և բանկային ծառայություններ տրամադրող խոշորագույն կազմակերպություններից մեկն է: Էյչ-Էս-Բի-Սի Խմբի միջազգային ցանցը ներառում է ավելի քան 72 երկրներում և տարածաշրջաններում գործող մոտ 6 100 գրասենյակներ:

**www.hsbc.am**

**+374 60 655 000**

Իրավաբանորեն հաստատված է
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Տերյան փողոց 66

© Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, 2016.
Բոլոր իրավունքները պաշտպանված են.
Պայմանները ուժի մեջ են սկսած 2016թ.-ի հունիսի 15-ից: